20. ՋԸԲԵ

Թագավորըմ կէղի, թագավորի ողիրըմ կէղի։ Տղեմ թագավորին կէղի, մեկ՝ ողիրին կէղի։ Թագավոր ոզիրի տղին շատ կսիրի, քընց ուր տղեն։ Էրկուս մեկտեղ վարժատուն կկարթան։ Ողիրի տղեն շատ աչքաբաց կէղի վըր թագավորի տղին։

Քսան տարեկան կէղին տղեքներ։ Թագավորի տղեն քսան տարին օր կըթմի, ինչպես օր մարթըմ խիվանդ էղի։ Թագավոր կիշկա ուր տղեն, օր բր զավուր վատ կէղի։ Իսկ Ջըբեն օր բր զավուր կխորոտկնա։

Թագավոր կղանչա Ջըբեին, կըսա, թե.— Խարցու տես քու ախպոր ցավն ի՞նչ ա։

Ջըբեն կկատարա թագավորի խոսքը, թագավորի տղից խառց փորձ կէնա։

— Ինչի՞ էսպես քանի էրթաս խիվանդի պես կէղիս։

Ըսաց.— Իմ ցավից վազն արի, իմ ցավ շատ ա։

— Քու ցավն ի՞նչ ա, ասա, կէղի օր մենք քու ցավին գեղ էնինք։

— Ես,— ըսաց,— ուրիշ թագավորի ախչկա վրեն սիրահարվեր իմ։ Էն թագավորու խող Սև ծովուց էն գեխըն ա։

Ջըբեն կըսա.— Ես կէրթամ քու խոր կըսիմ։ Քու խեր օր կըսա. «Ասքար քու խետ վերուց», գու ասա թե. «Ես ասքար չըմ ուզի, ես Ջըբեն կուզիմ, Ջըբեն մինակ իմ խետ թ'իգա»։

Ջրբեն կէրթա, թագավորին կըսա.— Քու տղեն կըսա՝ Սև ծովու էնդեխ թագավորըմ կա, ես էնոր ախչկա վըրեն սիրահարվեր եմ։

Թագավոր ուր տղին կղանչա, կըսա.— Ասքար վերցու քու խետ, գնա՛ էն թագավորի վրեն կովի՛, էնոր ախչիկ քըզի բե։

Տղեն ըսաց.— Ես քենե ասքար չուզիմ, ես քենե Ջրբեն կուզիմ։

Ըսաց.— Դու կէրթաս, Ջրբեն մի տանի, Ջրբեն տանիս իմ բեհրն չելի (կձանձրանամ)։

Կըսա.— Չէ՛, Ջրբեն կտանիմ իմ խետ։

Թագավոր կղանչա Ջրբեն, կըսա.— Իրարու մուղաթ կկենաք, գացեք ծըզի խարջլիխ վերցեք։

Գացին ուրանց խարջլիխ (ծախս) վերցին, էլան ճամբախ ընգան, գացին։ Շատ ու քիչ աստված դինա, ծովուն խասան։ Ծովու պռուկ մե քարե մղարե (այր) մը կար։ Մտան մղարի մեջ։ Թագավորի տղեն քնավ։ Ջրբեն հ'իմաց մնաց։ Իրեք խատ եղվընիկ էկան, քարի վրեն իջան։

Էն մեկ խարցնեց.— Ընկերներ, էստոնք ի՞նչ մարթ են։

Մեկ եղվընիկ ըսաց.— Էն մեկ թագավորի տղեն ա, մեկ լէ ողիրի տղեն ա։

Ըսաց.— Ըստեխ ի՞նչ բան ունին։

Ըսաց.— Էկան, կէրթան Սև ծովու էն դհի թագավորի ախչիկ կբերին։

— Կենա՞ն էրթան բերին։

— Եթե մեր ասածով էնին, կէրթան բերին։

— Ի՞մալ կէրթան բերին։

— Թե սևութենից էրթան, իրեք ամիս ջորով (հազիվ) հասին թագավորի քաղաք։

— Ծովո՞վ իմսալ պտի էրթան։

— Եթե օր խասկնան մըր լեզուն, էս ուրանց հ'առեճ ջրու մեջ քարըմ կա, էն քարի տակ գուռ (ավազան) ըմ կա. էն գռան մեջ էրկու խատ գամ (սանձ) կա, խրեղեն ձիու գամեր են, թե էլին իրարու օգնեն էն քար շրջեն, գամեր գելին։ Ծեռ թալեն գամեր վերցուն. աստծու անուն տան, ծովու մեջ թալին, գինգի խրեղեն ծիաներու բերան, քաշին հեծին մե սահաթվան մեջ ուրանց կտանին էն քաղքի մեջ դուս կխանին։ Գամեր ծիաներու բերնից խանին, ծիանք բաց թորկին։ Ծիանք ծով մնան, գամեր ուրանց մոտ մնա։ Էրթան, ախչիկ բերեցին, գամն ծովն ծրքեն, ծիաներու բերան գինգի, ծիանք էնոց կազատին։

15—1086

Էդ խոսք ըսելուց վերջ, եղվընիկներ թռան գացին։ Ջըբեն թագավորի տղին հ՚իմցուց, ըսաց.

— Ախպեր, էլի ծովու մեջ լողկընանք։

Թագավորի տղեն ըսաց.— Ես չլողկընամ։

Ջըբեն շորեր խանեց, ծով մտավ, եղվընիկներու ըսած քարին մոտըցավ։ Շատ շարչըրվավ քարի վրեն, թագավորի տղին ցավ տըվեց, թագավորի տղեն լէ շորեր խանեց, էն լէ ջուր մտավ։ Գնաց խըտ Ջըբե, օգնեցին խըտ իրար, քար շրջեցին, քարի տակ դուռըմ կեր, գռան մեջ էրկու դամ կեր։ Մեռ տարան, դամեր խանեցին, ասու անուն տվեցին, գամեր ծովու մեջ թալեցին, հ՚ընգավ ծիանեռու բերան, ծիան քաշեցին ուրանց հ՚առեճ, շորեր խագան, ծիանեռուն թորկեցին։ Մեկ սահաթվա մեջ ծիանք էդ ախչկա թագավորխոր քաղաք խանեցին։

Ծիանեռուն բաց թորկեցին, ծիանք ծով գացին։ Ուրանք քաղաք մտան։

Մե պառվի մի տուն գացին, բարև տվին պառվուն, տեխ ուզեցին։ Պառավ էդոնց բարևն առավ, տուն առավ։ Նստան տուն, խարցըցին.

— Նանե, էս քաղաք ինչի էսմլա տխուր ա։

— Արաբըստանա թագավոր հարուր տարեկան մե էրկու անգամ ուղընգան ճամփեց մեր թագավորի ախչկան, ախչիկ չառավ։ Արաբըստանա թագավոր ասքար էնեց, էկավ մեր թագավորին կրռիվ էնեց, մեր թագավորին ըսպանեց։ Ըսօր չորս օր մեր թագավորին ըսպաներ ա օր ախչկան տանի։ Ախչիկ յոթ օր օր ա ուղե Արաբըստանա թագավորից։ Էսօր չորս օր գնաց, իրեք օր մնաց, օր ախչիկ տանին։

Ջըբեն ըսաց.— Դու լէ մեր մամն իս, մե խոստովանքըմ կա, քըզի կէնինք։

Ըսաց.— Դուք լէ իմ տղեքներն եք, ըսեք տեսնինք ի՞նչ ա ծեր խոստովանանք։

Ջըբեն ըսաց.— Էսա իմ ընկեր, թագավորի տղա ա, սիրահարված ի էդա ախչկան, դու կենաս-էնոր խասկըցուս, թե՝ «Իմ տուն ինն»։

— Հա,— ըսաց,— կենամ խասկըցում։— Պառավն ըսաց,— Ես տկլոզ եմ։

— Հան, Նանե՛, առ քըզի փարա, գնա քըզի շոր առ։

Ճանգըմ օսկի տվեցին պառվուն. պառավ գնաց դուքան. ուրին կարուկ շոր առավ, ծեռքմ էլ ախչկա շոր թագավորի տգին առավ, բերեց տուն, շորեր խաքուց տղին էլ, ըսաց.

— Դե՛ ելիր, իմ տղա, էրթանք թագավորի ախչկան մոտ։

Առավ տղին, գնաց թագավորի ախչկա դուռ։ Դռնապահներ չթորկին պառավ տուն մտեր։

Պառավ դռընպահներուն ըսաց թե.— Էդի իմ տիրոջ ախչիկն ա, կէրթամ տեսիմ, բարև մնա կէղիմ խետ, հ՝ինք կէրթա։

Դռնապահներ ճամբախ տվին, պառավն ուր ախչիկ գացին։ Թագավորի տղեն տուն օր մտավ, ախչկա խաքուստ վրեն խանեց։

Թագավորի ախչկա աչքն օր առավ տղեն. շատ ուրախցավ։ Շատ զրուցին, տղեն օր էլավ էրթեր, ըսաց.

— Ինչպե՞ս կէղի, ահա մնաց իրեք օր, ընձի կտանին, դու ընձի էգոց ծեռնից չկե՞նաս աղատիս։

Պառավն ըսաց.— Էդոր ախպեր իմ տուն ա, թե գուզիս լուսուն էնոր կբերիմ էստեխ, էնոր շորեր դու կխաքիս, քըզի կտանիմ իմ խետ։

Ըսաց.— Նանե՛, քու խորուրդ աղեկ ա։ Լուսուն էդոր ախպեր բի գաս, ես քու խետ կէրթամ։

Բարև մնա էղնելով, թագավորի ախչիկ թուխթ մը գրեց, պառվու ծեռ տվեց. «էս պառավ ինչքան գա էստեխ, արգելք չէնեք»։

Պառավ էլավ առավ թագավորի տղեն, խըտ իրար գացին։

Պառավ Ջըբեին ըսաց.— Ես էս տեսակ եմ ըսե թագավորի ախչկան, դու կընթունի՞ս էսա բան։

Ըսաց.— Կընթունիմ։

Լուսուն շուտ ախչկա շորեր Ջըբեին խաքուց։ Ջըբեն խըտ պառվուն թագավորի տուն գացին։ Բարև տալով՝ տեխ նշանց տըվեց, նստան։

Ջըբեն ըսաց.— Իմ քու՛ր, քու շորեր ինձի տու, խըտ պառվուն գու գնա։

Շորեր փոխեցին։

Ջըբեն ըսաց պառվուն.— Դուն եռսունևեին օր ընձի կիշկեք, թե էկա խասա ծըզի, մե տեխ կէրթանք, թե չէկա, ծեր գլխուն ճարըմ կէնիք։

Էդ խոսք ասելու վերջ, թագավորի ախչիկ պառվու խըտ իրար էլան գացին։

Էդ երկօր օր հ՝ընցավ, Ջըբեն ջուաբ էնեց Արաբստանա թագավորին, թը. «խերիք ա իմ խոր քաղաք, էլի էրթանք»։

Թագավոր էդ խոսքն օր լսեց, շատ ուրախացավ, էլավ ուր պատրաստուտուն տեսավ, առան ախչիկ, գացին։ Գացին Արաբստանա թագավորի քաղաք խասան։ Թագավոր ուզեց օր պսակվեր։

Ըսաց.— Մենք ճամբախ ենք էկէ։ Նեղրցեր ենք, քառսուն օր օր տուր, օր թըմավ. պսակվինք։

Թագավոր ընթունեց էգ խոսքը։ Մե խորոտ քոշկի մը մեջ ախչիկ գրեց ու ախչկա խետ ուր ախպոր տասնութ տարեկան ախչիկըմ ճամփեցին էտոր մոտը։ Խինգ վեցն օր իրարու մոտ օր մացին, ախչիկն ու էգի խըգ իրար բացվան։

Թագավորի ախպոր ախչիկն ըսեց.— Խարս, գու ափսոս չէ՞ր, առիր իմ խորոխպեր, իմ խորոխպեր հարիր տարեկան ա, յան ես տղա (մանչ) էղի՝ քղի առի, յան թե դու տղա էղիր՝ ընծի առիր։

Ջըբեն ըսաց.— Եթե մեր սրտխ (սեր, հավատք) իրարու խետ դրուստ էղի, աստված մեր խնթիրք շուտ կլսա։

— Իմա՞լ, գու լէ ախչիկ, ես լէ ախչիկ, շատ էլ օր մեր սրտխ խրդ իրար էղի, ի՞նչ պըտի էղի։

Ջըբեն կըսա.— Աղոթենք, աստված կանչեք, կէղի օր մեր էրկրսեն մեկ կէղի տղա։

— Էդըմալ ա, էլինք աղոթք էնինք, աստված կանչինք։

Էլին մե քիչ աղոթք կէնին, ասու անուն կիտան։

Ջըբեն կխարցու ախչկրնից,— Ինչպե՞ս ես, ըսկի բան մի քու պոլոր չէրև՞ա։

— Չէ՛։

Ախչիկ կխարցու Ջըբեից.— Խարս, քու պոլոր բանըմ չէրևա՞։

Ջըբեն կըսա.— Ես էղա տղա։

— Էն աղեկ օր դու էղար տղա, ես ու դու մեկ ինք, ապա մենք իմալ էնինք, օր թագավորի ծեռից աղատվինք։

Ջըբեն ըսաց.— Կխեծինք ծիանք, կփախինք, կազատինք։

Կանչին սեյիս.— Գնա՛ նալբանդըմ կղանչա թի գա։

Սեյիս գնաց նալբանդմ կղանչեց էկավ։ Թագավորի ախչիկ ծիաներուց էրկու ծի նալել տվեցին։ Էլան խեծան, դեմի թագավորի քաղաքն էկան։

Նոսունին ավուր վրեն էկան խասան թագավորի քաղաք, գացին պառվու տուն, տեսան օր թագավորի տղեն ու թագավորի ախչիկ անխոդ նստուկ են։

Ջըբեն կղանչեց թագավորի տղին ու ըսաց.— Հ՝որի՞ անխոդ նստեր ես, ել օր մեր գլոխ ազատինք։

Թագավորի տղեն օր լսեց Ջըբե ծեն, շատ ուրախցավ։ Էլան ուրանց պատրաստութեն տեսան, պառվու խետ բարև մնա էղան, դեպի ծով գացին։

Գամեր թալեցին ծովու մեջ, խրեղեն ծիանք էկան, ծիաներու

պառեկին էլան, ծիանք թը ծով թորկեցին։ Մե սահաթվան մեջ ծովը անցուցին։ Ծովն օր անցան, ծիաներուն բաց թորկին, ուրանց խաց պատրաստին, խաց կերան, թագավորի տղեն ըսաց.

— Ջըբե, ես մե քիչ գլոխս կդնիմ, կըռհաթիմ։

Թագավորի տղեն քնավ։ Ջըբեն քարի մզարեն գնաց։ Գլոխ գրեց ու պառկավ։ Էդ իրեք եղվընիկ քարի վրեն իջան։

Էն մեկ հարցուց թե.— Էսոնք ի՞նչ մարթ են էկած էստեխ։

Մեկել պատասխանեց.— Էդի թագավորի տղեն ու ողիրի տըղեն ին։ Ընցած օր օր էկանք, էդոնք ին, մեր թարիֆ ընելով էդոնք գացին ուրանց մուրազին խասան։ Եթե հիմա էդի ա մեր լեզուն խասկնա՝ թշնամին (սատանեն) թագավորի կալը (սիրտ) մտե, էն օրվընե օր գացած թագավորի աչքից շատ էլած։

— Ըպա ի՞մալ կէղի, օր էտոնք ազատվին մոտից։

— Եթե ըսիմ, էդի կլսա, իմ ըսած դինա, թագավորի տղեն էդոր զրուցք կիտա, էդ օր զրուցա, քար կէղի։

Կըսա.— Մենք մեր բարիք էնինք, թըխ ազատվին թագավորի ձեռնից։

Ըսաց.— Հըմի օր էլան էդոնք, դեմի թագավորի քաղաք գացին, թագավոր կճամփա ամեկուն ծի մի. աղու թալած ծիու թամքի վրեն, թե խեծին, կմեռին։ Թե օր խելացի էղին, կզարկին ծիանք կէնին էրկու կտոր։ Էն դիեն օր գացին տուն, քոշկի դռնով տուն չմտին, ինչ օր աղեք հ'օդեքն ա, աղու թալե, եթե էրթան էն խորոտ հ'օղեք պառկին, կմեռնին։ Էնոց հ'օդեքներու կուշտը դազերու գոմըմ կա, էն գոմ մնան։ Քառսուն օր գիշեր-ցերեկ ուրանց մուղաթ կէնան։ Թագավոր սեյրի (մոգական) օձըմ կբռնա, օր թորկա էդոց սպանա։ Թե էդ մարթ հ'իմաց էղի, էդ օձ լէ սպանա, կազատվին, բան չկա։

Եղվընիկներ թռան գացին։ Ջըբեն էդ դհից էլավ, էկավ թագավորի տղին հ'իմցուց, էլան ճամփա ընգան։ Գացին, թագավորի խոզի մեջ մարթըմ տեսան, մարթուն ըսին.

— Կէրթաս թագավորին աչքալուս կիտաս, թե քու տղեն ու Ջըբեն էկան։

Մարթն գնաց թագավորին աչքալուս տվեց.— Թագավոր, քու աչքը լուս, քու տղեն ու Ջըբեն խըտ իրար էկան։

Թագավոր բան մի փարա էդոր բաշխեց, էլավ ծիանք պատրաստեց, աղուն թամքերու վրեն ցանեց, էրկու մարթու ծեռ տվեց, ըսաց.

— Քաշեք, տանեք, մեկ իմ տղեն խեծի, մեկ Ջըբեն խեծի։

Միանք տարան խասուցին, Ջրբեն քաշեց թուր, էրկու ծիուն լէ սպանեց։

Թագավորի տղեն կրնչկոա (խեթ նայեց) վըր Ջրբեին, թե ընչի՞ իմ խոր ճամփած ծին պիտի սպանա։

Ուր կնիկ ըսաց.— Իմ ախպեր ինչ կէնա, թ'էնա, հ'ուհու (բընավ) զրուցք չէնիս։

Էկան տան մոտըցան։ Ջրբեն ըսաց.

— Մենք դռնով չմտինք, մենք կէրթանք ղազերու գոմ։

Գացին մտան ղազերու գոմ։ Քառասուն օր Ջրբեն չքնավ։ Թագավորի տղեն բանից խաբար չուներ։ Քառասուն օր օր թըմավ, սաբախտան շուտ Ջրբեն իշկեց տեսավ օր սերվենի օձն էկավ, տուն կմտեր, քաշեց Ջրբեն թուրը, օձուն կտոր կտոր էնեց։ Իշկեց տեսավ օր կաթմ արուն օձուց, թագավորի տղու էրեսին էր ընգե։ Ջրբեն ուզեց թրով էդ կաթ արունը թագավորի տղի էրեսեն վերցեր։ Թուրն օր թագավորի տղու էրես քիսավ, թագավորի տղեն հ'իմցավ։

Թագավորի տղեն ըսաց.— Օ՜, անզո՜ւթ, կուզիս ընձի սպանի՞ս, դու իմ խոր ճամփած ծիաներուն սպանեցիր, ես ծեն չէնեցի. էկանք էստեխ, խորոտ հ'օղեք չթորկեցիր, բերիր էս ղազու տեխ, էսօր լէ կուզիս ընձի մորթի՞ս։

Թագավորի տղեն էդքան հերսոտ օր խետ զրուցեց, Ջրբեին շատ ցավ տվեց, Ջրբեն ըսաց թե.

— Օր քու խոր ճամփած ծիանք չըսպանի՝ խեծինք, կմեռինք։ Ջրբեն մինչև չոքեր էղավ քար։ — Եթե թորկի էրթեր խորոտ հ'օղեք, մե գիշեր կմեռինք։ — Մինչև սիրտ էղավ քար։ — Հալա իշկա հ'ուշապու ջանդակ, նոր ասա՝ թե ընձի կսպանիս, եթե օձուն չսպանի, օձ մըզի կսպաներ։ — Ջրբեն մինչի գլոխ էղավ քար։

Թագավորի տղի կնիկ հ'իմցավ, ըսաց,— էդ ի՞նչ էր էղավ։

Թագավորի տղեն ըսաց.— Իմ չգինալով էրեցի էս բան։ Էն օձ էկեր էր օր մըզի դեղեր, մենք մեռնենք։ Ես ըսեցի. «էդ ինչ ա կէնիս»։ Էն ուր գլխու գալած ընձի ըսաց, հ'ինք դարձավ քար։

Թագավորի տղի կնիկ ըսաց.— Ես չըմ գինա էմլա բան. ինչպես էնոր էնիր քար, կէնիս էնոր գլխուն ճար, թե չէ՝ չըմ էղի քըզի կնիկ։

Թագավորի տղեն էլավ, ճամբախ ընկավ։ Շատ ղվռնեց, չէնեց մե բան։ Էն մեկ օր ուրանց էրթած օր միտք ընկավ, թը. «Մենք էն օր օր գացինք իմ կնկան բերելու, ծովի ափ, կէղի օր էդի էդտեխ ծովի ափ հ'իմցավ»։ Թագավորի տղեն էլավ, դեմի ծով գնաց։ Գընաց էն մզաբեն ու նստավ։

Իրեք խատ եղվրնիկ էկան, էն մեկ եղվրնիկ խարցուց.

— Էս ի՞նչ մարթ է էստեխ։

Էն մեկել ըսաց.— Թագավորի տղեն ա, աղեկութուն Ջըբեն էտոր էնեց. էդի Ջըբի աղեկութուն չգիցավ։ Ջըբի էրես տվեց, Ջըբեն էտոր մեկ մեկ ըսաց, Ջըբեն դարձավ քար։ Մկա էկեր ա, որ մեկ բան հ՚իմնա, էրթա Ջըբե էնե իսան։

Մեկել խարցուց թե.— Օր ղարձե քար, կեղի՞ օր էղի իսան։

Ըսաց.— Խա՛, թե խասկնա ընե մեր ըսած, Ջըբեն կէղի իսան։

Ըսաց.— Ի՞մալ կէղի իսան։

Ըսաց.— Ուրին տղեմ է էղե, էրթա էն տղեն Ջըբե քարի վրեն մորթա, Ջըբեն կդառնա իսան։

Էդա խոսքն օր ըսավ, եղվրնիկներ թռան։ Թագավորի տղեն եղվրնիկներու ասած խասկցավ։ Էլավ դեմի տուն գնաց։ Իրկուն տուն մնաց։

Սաբահտան շուտ էլավ ուր տղեն Ջըբե քարի վրեն մորթեց։ Տղի արուն օր թափավ Ջըբե քարի վրեն, քար կոտրավ, Ջըբեն մեջեն ելավ։

— Օ՞ֆ,— ըսաց.— ջորով ի քնե, ընչի՞ ընձի հ՚իմցուցիր։

Ջըբեն օր էդ խոսք ըսաց, թագավորի տղեն ըսաց.

— Էս երեք տարի դարձեր իր քար։

— Ի՞մալ դարձիր ի քար։

— Իշկա քու կուշտ։

Ջըբեն օր իշկեց ուր կուշտ, կտորըմ քար մե կուշտն էր ընգե,. կտորըմ՝ մե կուշտ։

Թագավորի տղեն ըսաց.— Ելի՛։

Երկուս խըտ իրար գացին թագավորին ըսպանեցին։ Թաղավորի տղեն թագավորութուն Ջըբեին տվեց։

Երկնուց իշավ իրեք խնձոր — մեկ ասողին, մեկ լսողին, մեկ փայ էնողին։